ԿԱՐԾԻՔ

Մեղա Սամվելի Նահապետյանի Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետության տնտեսության բարեփոխումները հանգեցրին նոր տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Այդ հարաբերությունների հիմքը մրցակցային միջավայրում տնտեսական գործունեություն իրականացնող սեփականատերերի շրջանակն է: ՀՀ տնտեսության զարգացման ներկա պայմանները պահանջում են սեփականության կառավարման հիմնական օրինաչափությունների և դրանց պետական կարգավորման ոլորտում առավել նշանակալի խնդիրների առաջադրում, որոնք որոշիչ դեր են խաղում տնտեսական համակարգի զարգացման գործում:

Սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացումը հիմք ստեղծեց սեփականության ձևերի բազմազանության առաջացման համար, ինչն էլ, իր հերթին, առաջ բերեց սեփականության կառավարման հետ կապված մի շարք խնդիրներ: Սեփականությունը ենթադրում է որոշակի իրավունքների, պարտականությունների և հասարակության սուբյեկտների միջև փոխհարաբերությունների համակարգի առկայություն: Սեփականատերերը կանգնած են այդ հարաբերությունների հաստատման և արդյունավետ կարգավորման խնդրի առջև: Այս առումով ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում սեփականության կառավարման բարելավմանն ուղղված գիտական հիմնավորվածություն ունեցող կառուցակարգերի մշակման անհրաժեշտությունը դեռևս չի կորցրել իր արդիականությունը:

Տնտեսական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում սեփականության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը

պահանջում է ժամանակակից նոր մոտեցումներ: Սեփականության ձևերի զարգացման և կառավարման սկզբունքներն ու մեթոդները պետք է հիմնված լինեն խորը տեսական գիտելիքների և գործնական փորձի ներդաշնակ համադրության վրա, ինչով էլ պայմանավորված է քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակը ՀՀ-ում սեփականության կառավարման բարելավմանն ուղղված մոտեցումների և միջոցառումների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում սահմանվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել սեփականության ձևավորման տեսամեթոդական հիմնական մոտեցումները, դրանց զարգացումը և փոփոխությունները, սեփականության իրավունքների ժամանակակից մեկնաբանություններն ու իրացման հիմնախնդիրները,
- ✓ հետազոտել սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանադրականության բնորոշումը, դրա իրացման մակարդակի վերաբերյալ մոտեցման կիրարկումը և սեփականության կառավարման գործընթացը,
- ✓ վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը, ներկայացնել այդ գործընթացի առանձնահատկությունները,
- ✓ հետազոտել պետական սեփականության ներդրման հիմնական ոլորտները, այդ կապակցությամբ ուսումնասիրել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները,
- ✓ հետազոտել ՀՀ-ում սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները և առաջարկել բարելավման ուղիներ,

- ✓ առաջարկել սկզբնական օղակներում (կազմակերպություններում) սեփականության կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումներ,
- ✓ առաջարկել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման նոր գործիքներ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը, հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Սեփականության ձևավորման տեսամեթոդաբանական հիմնադրույթները և սահմանադրականությունը անցումային տնտեսությամբ երկրներում» գլխում ուսումնասիրվել են սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, քննարկվել են սեփականության իրավունքի սահմանման և իրացման հիմնախնդիրները, դիտարկվել է սեփականության իրավունքի իրացման մեթոդաբանական հիմնահարցերը՝ սահմանադրականության համատեքստում, ինչպես նաև ներկայացվել է սեփականության կառավարման գործընթացը:

Ատենախոսության երկրորդ՝ «Սեփականության կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը ներկայացրել է սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում, ուսումնասիրել է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման վերջին տարիների արդյունքները, ինչպես նաև վեր են հանվել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում

սեփականության կառավարման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Սեփականության կառավարման և տնտեսաիրավական կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը քննարկել է սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման և բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացրել է կազմակերպություններում սեփականության կառավարման արդյունավետության գնահատման, ինչպես նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման գործիքների ներդրման վերաբերյալ մոտեցումներ:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Աշխատանքում նորույթ պարունակող հիմնական գիտական արդյունքները հետևյալն են.

1. Տնտեսության պետական կառավարման տեսա-գործնական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են ազգային տնտեսությունում պետական սեփականության և պետական ձեռնարկատիրության փոխառնչություններն ու սահմանները, դրանց կառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալները, հիմնավորվել են տնտեսական քաղաքականության մեջ սեփականության կառավարման բովանդակությունը և գործիքակազմը:
2. Բացահայտվել են ինստիտուցիոնալ բնույթի այն ցուցիչները, որոնք վճռորոշ դերակատարում են ունեցել սահմանադրականության դեֆիցիտի կրճատման, սահմանադրականության չափանիշից ելնելով երկրների կլաստերացման համար: Այդ ցուցիչների թվում են գույքային իրավունքների իրացումը, կոռուպցիայի մակարդակը, կարգավորման որակը և այլն:
3. Պետության կողմից իր սեփականության իրավունքների իրացման և կազմակերպությունների գործունեության ֆինանսա-տնտեսական

արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում պետական սեփականության կառավարման վրա բացասաբար ազդող գործոններն ու ներկայացվել են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և միջոցառումներ:

4. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը խթանելու և պետական ակտիվների շահութաբերության մակարդակը բարձրացնելու համար առաջարկվել են այդ կազմակերպությունների գործունեության գնահատման մոտեցումներ:
5. Առաջարկվել է պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մոդելի փոխակերպում, որն այդ կազմակերպությունների համար կապահովի հնարավոր ինքնուրույնություն, ինչպես նաև թույլ կտա ներդնել առևտրային կազմակերպություններին բնորոշ գործարար և կառավարման կառուցակարգեր:

Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթներն ու եզրակացություններն ուղղված են ՀՀ-ում սեփականության կառավարման գործընթացի բարելավմանը: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում պետական կառավարման մարմինների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից սեփականության կառավարման արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսությունում նվազ ուշադրության են արժանացել պետական սեփականության կառավարման հիմնահարցերը պետություն-մասնավոր հատված գործընկերության համատեքստում:
2. Ատենախոսության 1.3 ենթագլխում հեղինակն անդրադարձել է սեփականության կառավարման գործընթացին: Աշխատանքում կարելի էր

նաև դիտարկել աշխարհում լայն տարածում ստացած սեփականության հավատարմագրային կառավարման կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:

3. Հաշվի առնելով մարդկային կապիտալի կարևորությունը ՀՀ-ում և դրա աճող դերը տնտեսության զարգացման գործում, կարծում ենք, որ իմաստ ուներ ուսումնասիրության առարկա դարձնել նաև մտավոր սեփականության իրավունքի հետ կապված փոխհարաբերությունները:
4. Ատենախոսության 2. 1 ենթագլխում հեղինակը ներկայացրել է սեփականության իրավունքների բազմազանեցման գործընթացը ՀՀ-ում և նշել բաց բաժնետիրական ընկերությունների թվի նվազման միտումի մասին՝ սկսած 2002թ.: Աշխատանքում կարելի էր անդրադառնալ նաև այն հանգամանքին, թե ինչ մեխանիզմներ կարելի է կիրառել բաժնետիրական ընկերությունների թվի ավելացման և կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ:

Եզրակացություն

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Սեդա Սամվելի Նահապետյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է, որն ունի գիտագործնական նշանակություն: Ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում սեփականության կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և արդյունավետ լուծումների բացահայտմանը, ինչը հեղինակին հնարավորություն է տվել տեսական եզրահանգումներ և գործնական առաջարկություններ կատարել դիտարկվող հիմնախնդրի շրջանակներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, որոնք հրատարակվել են հեղինակի 8 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ, Սեդա Սամվելի Նահապետյանի «Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները

սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կատարված է պատշաճ գիտական մակարդակով, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը միանգամայն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու Վ. Գ. Գաբրիելյան

Վ. Գ. Գաբրիելյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Վ. Հովհաննիսյան

21.04.2022 թ.